ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 282
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքը (Մաքենիս բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Վարդենիս համայնքի (Մաքենիս բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքը (Մաքենիս բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի (Մաքենիս բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
05-064-0107-0075 կադաստրային ծածկագրով 1.2 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	05-064-0107-0075 կադաստրային ծածկագրով 1.2 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Վարդենիս համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Մաքենիս բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի (Մաքենիս բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «15» «հուլիսի» 2024 թ.